սէբարէ: Ամա նասըլ էլա սէբարէ թոքսէվրի՞ս, պէզէ մը Աշոտին տալով, պաչիկ մըն ալ իր ֆիանսէին: Քսանըբէնտէ հոգի մէջ մտան: Թովրատի սա վա պարտէ: Օն վա ռիկոլէ: Էբէյի տեսնալիք բան կայ: Ա՛հ, լուլուտաքիմու, քէլ պապիլոն, քէլ չորպա, էքէ՛լ խայտառակութիւն:

Ահա այսպէս յունարէնը միշտ իր լեզուին վրան է, թրքերէնը իր լեզուին տակն է, ֆրանսերէնը իր լեզուին ետեւն է, իսկ հայերէն լեզուն ալ իր լեզուին ծայրն է: Եւ ահա թէ ինչու լեզուն երկար է այս բազմալեզուեանին:

Ան գիտէ վարը նստիլ ու վերէն նայիլ: Գիտէ վարը պառկիլ ու վերէն խռկալ: Վարը ուտել, վերը կշտանալ: Վարը աշխատիլ ու վերը հանգչիլ:

Չենք կրնար սակայն ըսել, որ այս ինքնահաւանը բան մը չգտաւ իր գաւառացի եղբայրներուն մէջ: Այդ մեղքը չենք գործեր, քանի որ Զմիւռնահայը մէկուն մէջ գտաւ էշ մը, ուրիշին մէջ՝ գոմէշ մը, երրորդի մը մէջ՝ խոզ մը, չորրորդի մը մէջ՝ ջորի մը, հինգերորդի մը մէջ՝ գայլ մը ու վեցերորդի մը մէջ՝ գազան մը:

Կարծես հայութիւնը կենդանաբանական պարտէզ մը եղած ըլլար ու ինք ալ՝ օտար զբօսաշրջիկ մը:

Ու չհաւնեցաւ այդ կենդանաբանական պարտէզին ալ:

Չենք կրնար սակայն ըսել, որ բնաւ բանի մը չէ հաւնած Իզմիրցին:

Ան միշտ մէկ բանի շատ է հաւնած՝ իր դրացիին կնկանը:

Իր դրացին ալ թերի չէ գտնուած: Ու այսպէս՝ բարեբարի եւ ոսկեզօծ դրացնութեան տեսիլներ անպակաս են եղած:

Իզմիրցին, տօնական առիթով, իր կնոջը կ’ըսէ.

-Գոհարս, քեզի ծաղիկ բերի:

Իսկ իր դրացիին կամ սիրուհիին կ’ըսէ.

-Ծաղիկս, քեզի գոհար բերի:

Յետոյ անպատճառ եկեղեցի կը փութայ ու Աստուածամօրը կ’ըսէ.